32. ԽԵՐ ԽԵՐՅԱԹ ԷՐՈՂ ՄԱՐԹ

Կէղի, չէղի՝ իրիկ, կընիկ ըմ կէդի, էրկու ճիժ:

Շատ դովլաթվոր կէղին: էտ մարթ կ'էլի տավար կը մորթա, կը թալա փողոց, շներ, գյելիր կուտին: Կէլի խաց, խմոր կէնա, կը տանի լցա գյետ, ծկներ կուտին:

Բազըրգան կուգյա էտ տեղեն կընցի: էտ խայ շատ դանվլաթ դյուշ-կուն կէղի: էտոր մոտ կը մնա մեկ ծի:

Կէլի ուր ծին, թեռ կը թալա վերեն, կուգյան կը նստի վըր անխպըրի մի, խաց կուտեն: Կը տեսի էրկու խոգյի էնտեխեն կուգյան:

Կասա. - Ախպեր ջան, մարթ ըմ կա էստեխ, շատ խեր խերյաթ կէնա, մենքյ էրթանքյ՝ պամը կուտա՞ մեզի:

Կասա. - Ախպե՛ր, վալա, խեր խերյանթ արող ես եմ, առեքյ մեկ ծին, տարեքյ ծեզի:

էտա մեկ ծին կուտա, կառնին էրթան: էտոնք կը մնան վըր անխպրին: Բազըրգան կուգյան չաղր կը զանի դանդի: Բազըրգնի աչք կընգյի էտ խայու կնիկ: Ուր հառեճի մարթ կը ճամխա, ետև կասա. - Կնա՛ խափա, բեր դանս:

էտ մարթ կուգյան կը խափա զէտ կնիկ, կառի կէրթա:

էտ մարթ կուգյան մարթուն կասա. - Բազըրգընի կնիկ տղով ա, արե էրթանք էղի աշխատամեր:

Իրիկ կասա. - Կնի՛կ, էլի կնա, խեր ենքյ էներ էնքյ, էս էլ դու էնա:

Կէլի կինգի հառեճ, կառի կէրթա: Բազըրգան կը խափա, կառի կը մտուցի սնդուկ: Գիշեր կէլի կը պառնա, էրթա:

էտ խայ կը մնա դանդի: Կառնի ուր ճժեր կը նստի դանդի: Շատ կիշկա՝ կնիկ չի գյան:

Կէլի ճժերաց կասա. - Մացեքյ դադի, ես էրթամ ծեր մեր բերեմ:

Իրիկ կէրթա մոր ետև, տղեն կուլա կընգի խոր ետև, կասա. - Դանդի, ես է կուգյամ:

Կէրթա դանդի, կը տեսի մեր չկա: Բանզըրգան էտ տեղ պանռցեր, գյացեր:

Կը շալկա կը տանի ճրով էն դեխ կը դնա: էն մեկն էլ կուտա գյետ խոր ետև կ'էրթա ճյուր կը տանի: Կը տանի ծյուկ կը լուցա:

էն մեկ ճիժ օր թորկեր էր դանի, գյել կը տանի:

Գյել կը տանի, գյել կասա. - Վա՜յ, էտի էն մարթու ճիժն ա, մ'ուտեք, ուստեն եք բերեր, տար դիր դան, մեզի խեր խերյանթ կ'էներ:

Օհուկն է կասա. - Վա՜յ, էս էն խայու տղեն ա, ինչ օր խեր խերյաթ կէ-ներ. ուստեն եք բերեր եք, տանեք դնեք դանն, խեր կէներ մեզի, խմոր կէներ, կը բերեր կը թանլեր ճյուր, խաց կը թալեր ճյհուր, մենք կուտինք, էնի մզիկ կապրեցուցեր:

էտ էրկու տղեն կէրթան կը նստին հիրարու կշտի խետ: Կէրթան մեջ գյեղին, խաց կը ժողվին:

Կէրթան պատի մի տակ կը կըծկվին, կը նստին:

Պառավ մի կուգյան ճժերաց ծեռ կը պըռնա կը տանի տուն, կասա. - Տղա՛, տու հո՞ւստ եք:

- Արճըշու ենք:

Կասա. - Տղա՛, ի՞նչի էղեր եք էտ լան անտեր, անտիրական:

Կասա. - Մեր խեր, մեր կուրիսեր ա:

Կասա. - Օեր խեր, մեր դո՞ր կուրիսան:

Կասա. - Բազըրգան իմ մեր տարավ, իմ խեր կնանց իմ մոր ետև, անչխուն իշկեցինք՝ իմ խեր չէկավ: Իմ խեր չէկավ, էկանք դանսի, խաց ժողվիք, մըկա քու խոգու սանդանեն՝ մեզի պախիր:

Տաս տարի էդ գյեղի մեջ ապըրվան: էն գյեղեն ելած գյանցին հյուրիշ տեղ: Տեսան խալիվոր մի նստե պատի տակ:

Կը տեսին էտ խալիվոր խաց կուտա:

Կասա. - Պապի՛կ, փըշում խաց տաս մեզիկ, մենք անտեր ճիժ ենք, պապե:

Կասա. - Լաո՛, տհու հո՞ւստ կուգյանք:

Կասա. - Արճըշու, մենք անտեր ճիժ ենք:

Կասա. - Դո՞ր կը մնիք:

Կասա. - Արճեշ:

Կասա. - Լաո, ծե խեր, մեր չունի՞ք:

Կասա. - Պապե՛, մեր մեր բաձրկան տարավ, մեր խեր կնանց ետև, չէկավ:

Կասա. - Էսլեմ օր ի՞նչ կուտիք:

Կասա. - Կը ժողվենք, կը նստենք պառվու մոտ, կուտենք:

Կասա. - Օր ջյուլ չկեր, մեչ ի՞նչին կը քնեք:

Կասա. - Պառավ ուր մեզանր կը թանլեր մեր տակ, մենք կը քնինք դանի:

Կասա. - Ապա ճյուր հո՞ւստ կը խմիք:

Կասա. - Մենք ինչ օր տավրի պես կուգյինքյ հառվի վերեն, ճյուր կը խմենք, էրթինք:

Կասա. - Լաո՛, իմա՞լ էնեիմ խըտ ծե:

Կասա. - Պապե՛, մենք անտեր ճիժ ենք, ինգյեր ենք քհու մոտ, պըտի մեզի տհու պախես:

Կասա. - Լաո՛, չը կանամ բանեմ ծեզի պախիմ, ամա էղի, չէղի ընծի փարա շատ կա, ծեզի պիտի պախեմ: Ես ծեզի կը պախեմ, ապա մեր չկա ծեզի:

Կասա. - Ապա, իմա՞լ էնինք, պըտի մեզի թանլե՞ս:

Կասա. - Ծեզի չը թանլեմ, էղի-չէղի ծեզի պըտի պախեմ:

Կասա. - Պապե, ես կէղիմ քեզի խոտաղ:

Էն մեկն է կասա. - Պապե՛, ես է կէղիմ քեզի հէգյի պախէմ, քյեզի փարա շատ կա, մեզի պախա, մենք օր ճոչցանք, դորիս կէղինք քեզի տղա, օր ճոչցանք՝ դու էղիս մեզի խեր, մենք է կէղինք քեզի տղա, մենք կը տատինք, դորիս քեզի կը պախինք:

Կասա. - Պապե՛, ապա մեզի կուժ մի առ, մենք ճյուր խմենք: Ապա մեզի մեկ խատ շառբիք առ, ճյուր խմենք:

Կասա. - Պապե՛, էրկու խատ է յորղան առ մեզի:

Կասա էն մեկ տղին. - Հէլի կնա հէգյի պախա:

Կ'էրթա հէզու մեչ, կը տեսի Ահնամախավք նստե կուլանա:

Կասա. - Ինչի՞ կուլանս:

Կասա. - Ես կուլանմ, իմ խեր կուրիսեր ա, իմ մեր կուրիսեր ա, իմ մեկ ախպեր հէսօր մեռեր ա: Էսա տըսնխինգ տարի ես իմ ախպեր վըր իմ թեբուռին պախի:

Կասա. - Էնի Աստվածն ա տարեր ա, ալիշ-վերիշ էրեր ա: Ապա խոզե մեր մեր մեռեր, մենքյ էլ տեսինք, մեր մեր կուրիսեր ա վեր մե:

Կասա. - Ապա տՀու իմալ կէնեք, իմա՞լ կապրիք:

Կասա. - էտ քսան տարի ա, մենք էստեխ կապրինք, խաց ժողվեր ինք, ապըրվեր ինք: Մկա էլ էկեր ենք, ինգիր ենք խալիվորու ծեռ, մեզի կը պախա: Խոզե տու էլ էղիր մեզի մեր:

Կասա. - Ես իմալ էղիմ ծեզի մեր, ես չը կանամ ծեզի շախեմ, պախեմ:

էտ ճժեր քսան տարի թամամ կը մնան խալիվորու մոտ: Խալիվոր կընգյի կը մեռի:

Կասա. - Վա՜յ, վա՜յ, խալիվոր մեռավ, ապա մեզի վո՞ն կը պախա:

Կէլին, կը թորկին էրթա՜ն: Կերթան մեկ գյեղի մի ռաստ կուգան: Կէրթան գյեղի մեչ, խաց կը ժողվեն կուգյան կը նստին էտ թանգյավորի բանկի մեջ: Թագյավորի փանջարի հառեճ կը նստին կուտին: Թանգյավոր փանջարից կիշկա, կը տեսի էտա տղեքյներ տանտի են: Ուր հանռեճի մարթ կը ճամփա, կասա. - Գյացեքյ առեք, էկեք, ըսինք ի՞նչ մարթ են: էսոնք անտիր ճիժ են, նստիր են դանի:

Հառեճի մարթ կուգյա զէտ ճժեր կառի, կէրթա:

էտի կասա. - Չէղի: էտա թագյավոր տանի մեզի ըսպանա:

Կասա. - Չէ՛, չէ՛, լաո՛, ի՞նչ տեսեր եք, էնի քսա էնեք:

էտիկ կը տանին ղաղի, կերակուլ կը պատրաստա, կը տնա հառեճ, ուտեն:

Թանգյանվոր կասա. - Տղա՛, տուքյ հո՞ւստ եքյ:

Ճոչ տղեն կասա. - Մենք Արճշու ենք:

Կասա. - Ծեր խոր անուն ի՞նչ ա:

Կասա. - Մեր խեր, մեր մեր մենք իսկի չը տեսեր ենք:

Թանգյանվորուն հախու կը վանխենան, չասեն:

էտ թանգյանվոր էտ ճժերաց խերն ա, օր ուր տղեքյներ գյիտի պռուկ կը թորկա, կէրթա: Կէրթա գյեղի մի ռաստ կուգյա, կը տեսի դանվլաթ ղուշի կը թալեն:

էտ խեղճ մարթ կասա. - Ես է էրթամ՝ թամաշա էնեմ:

Կէրթա կը տեսի ղավլաթ ղուշի կը թանլեն: Կը թանլեն, կուգյա կը նստի վըր էտոր գյլխուն:

Գյեղական կը թափեն վըր էտ խայուն կը թփեն: էտի կէրթա է զատուվանց պատի մի տակ կը նստի:

Դանվլաթ ղուշին մեկ էլ կը թողին՝ կէրթա կը նստի վըր էտոր գլխուն:

Կը բերեն էտա խայուն կը մտուն ամրոցի մեչ: Դավլաթ ղուշին կը թողեն՝ կուգյա կէճի ամրոցի վերեն:

Կասեն. - Վալա՜, թագյանվորի խացն էղէ էտոր կսմանք, պըտի էսի էնենքյ թագյանվոր:

Կը պերեն զէտ խայ կը դնեն թագյանվոր էդի:

Էտ խայ թագյանվորութեն կէնա: Էտ տղեքյ կուգյան, կը նստին թագյանվորի ակուշկի հանռեճ:

Թագյանվոր ակուշկից կիշկա, կասա. - Էս տեսեր եմ՝ էտ էրկու էրեխեք առատմե դանդի են, գյացեքյ տեսեք էտ էրկու էրեխեք անտեր ճի՞ժ ին, նստեր են դանդի:

Հանռեճի մարթ կուգյա զէտ էրեխեք կառի, կէրթա թագյանվորու մոտ:

Այս հեքիաթի շարունակությունը միանգամայն նման է ... *

Տդաք կէրթան, թագավոր կը գիտնա անոնց իրեն տղաներ ըլլալը, և հետո բեզըրգանի մոտ կը գտնեն իրենց կորսված մայրը:

* Գրառողը բաց է թողել, թե որ հեքիաթին է նման շարունակությունը (ծ.կ.):